ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 45.11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ՝ 2023Թ. ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ (ԳՐԱՎՈՐ) ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ՝ Արա Զոհրաբյանի, Արտյոմ Սուջյանի, Գառնիկ Թուղտարյանի, Միսակ Մարկոսյանի, Արթուր Պողոսյանի և Արմինե Ֆանյանի

հաշվի առնելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց որակավորման քննությունների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

լրացուցիչ ուսումնասիրելով աշխատանքները և հանձնախմբի անդամների կողմից ունկնդիրների չբացահայտված աշխատանքների գնահատականները,

հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից կատարված գնահատականները՝ ըստ ծածկագրերի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 98-րդ կետի պահանջներով, միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց՝ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության ունկնդիրների 2023թ. հուլիսի 17-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ամփոփել «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձանց՝ քրեական ուղղվածության ունկնդիրների 2023թ. հուլիսի 17-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական

Որոշում N 7-Ա
27 հուլիսի 2023թ.

խնդիրներ և դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Տեղադրել սույն որոշումը և հավելվածները (բացառությամբ գնահատման պատճառաբանությունների) ՀՀ փաստաբանների պալատի կայքում և փակցնել՝ ՀՀ փաստաբանների պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

4. 2023թ. հուլիսի 25-ին ժամը 13^{00}-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղը և հավակնորդների ներկայությամբ կատարել աշխատանքների և հեղինակների նույնականացում:

5. Սահմանել, որ՝

1) միայն առաջին փուլը հաղթահարած հավակնորդներն են իրավունք ձեռք բերում մասնակցել հարցազրույցին փուլին.

2) որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին կամ դատական կարգով՝ որակավորման քննությունների համապատասխան փուլի արդյունքների հրապարակումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝
Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 7-Ա
ք. Երևան
24 հուլիսի 2023թ.